Ցանձուածքներ, Սիմոնակոլ, Սև քար[1], Սիվտակ քար[2], Արգնուոց Լեն. Լեն . . . :

Այս աղբիւրներն են գիւղից հեռու:

Ճըլվըկ, Ավտրկայ, Ջրնկղնկան, Կաթնաղբուր, Սալաղբուր. Բոզ աղբուր, Ջռան Լեն . . . :

Գիւղիս արևելեան հիւսիսն Երդման ձորի գլուխն վեց մանր լճակներ կան Դուռնակոլ (կռնկի լիճ) անուամբ:

Գիւղս գտայ փոքր գիրքով մի ձեռագիր «Հարանց վարք» սորա յիշատակարանն քանդուած տարուած էր, գտայ նա և մի ձեռագիր ճաշոց եղծուած քանի յիշատակարաններով, որոց մին մասամբ անարատ մնացած էր, որ է յիշատակարանը:

«Ով տօնողք և ընթերցողք, զՔրիստոս պատարագողք, զձեզ աղաչեմ թախանձելով, աղաղակեմ հառաչելով զգերիս յիշէք լի բերանով, զի ազատէ զգերեալս հոգւով, մանաւանդ ստացող Ս. գրոյս զԽօճա Ղամաթն և որդիքն իւր Պետրոս, Աստուածապովն, զՅոհանն և զԱբրահամն և զկենակիցն իւր զՄարգարիտն և զծնողսն իւր զՄիր Խումարն և զՍօլթանն և որ յիշէքդ յիշեալ լինիք ի Քրիստոսէ ամէն»:

«Յիշեցէք Ղամաթի որդի Աստուածապովն և մօրն իւր Հանգուցեալ Հիսնուխանին, դստերացն Սապրխանին, Նազլու և Մարիամին, Գալուստանին՝ ով որ զսա կարդայ ոչ ժողովրդեան մէջում Քրիստոս Աստուծոյ նզովքն ի վերայ իւր լինի...»:

Սորա թուականը եղծուած է:

---

1. Արդէն Սուկաւէտի շուրջն հեռու եւ մօտ մինչ տեսնուած են ածխահանքի նշաններ, որպէս եւ Խաչլուայ քաւանի մէջ երկու տեղ եւս տեսնուած է, որոց մին ծօՀեր կոչուած վայրն է:

2. Վաղարշակերտցիք լաւ ժամն այս տեղերէն կը բերեն հարիւրաւոր բեռներով, նաեւ մանտակ կոչուած քոյսն որ Ֆան ապուրի մէջ կը ջարդեն, որը ապուրին լաւ համ կտայ: